ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 27-Ա
16 ՄԱՐՏ 2021Թ
ԱՐԱՄ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասով, 1.7-րդ մասով, 1.8-րդ մասի դ/ և ե/ ենթակետերով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Մելքոնյանի հետ կնքած 16.03.2016 թ N294 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի ա/ ենթակետը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 21.02.2021 թ Ն/172-2021 զեկուցագիրը, ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի մարտի 16-ի N01/09.2/4905-2021 գրությունը և Արամ Մելքոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 . 2021 թվականի մարտի 16-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Մելքոնյանին ազատել զբաղեցրած պաշտոնից,

լուծել նրա հետ կնքած 2016 թվականի մարտի 16-ի N294 աշխատանքային պայմանագիրը:

2. 2021 թվականի մարտի 16-ից Արամ Մելքոնյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

3/16/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550